ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻՆԵ ԴԱՎԹԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ
(ՀՈԳԵՎՈՐԻ ԵՎ ԲՆԱԶԴԱՅԻՆԻ ԽՆԴԻՐԸ)

Ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **Գաբրիելյան Վազգեն Արշալույսի**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Մուրադյան Սամվել Պարգևի**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դվոյան Սիրանուշ Գառնիկի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. հունիսի 28-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 52ա , ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. մայիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր,
պրոֆեսոր **ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հակոբ Օշականը եղել և մնում է սփյուռքահայ գրականության ու գրականագիտության ճանաչված հեղինակներից մեկը, և հետևաբար նրա ստեղծագործությունները եղել են գրականագիտության ուշադրության կենտրոնում՝ սկսած նրա ստեղծագործական առաջին իսկ շրջանից: Շատ է գրվել հատկապես նրա վիպական ժառանգության մասին: Փոքր արձակի գործերից ուսումնասիրվել է առավելապես «Խոնարհները» ժողովածուն, իսկ մնացած գրքերի ու շարքերի մասին խոսվել է ընդհանուր ակնարկների շրջանակում: Օշականի փոքր արձակում արծարծված տեսական խնդիրները գրեթե դուրս են մնացել գրականագիտական պատշաճ ուսումնասիրությունից:

Մերօրյա ընթերցողը հեռացել է արևմտահայ գրականությունը սփյուռքահայ գրականությանը միացնող օղակի դեր կատարող այս գրողի ստեղծագործություններից՝ այն որակելով դժվարընկալելի կամ անհասկանալի: Իսկապես, Օշականի ստեղծագործության, հատկապես փոքր արձակի լեզուն դյուրընկալելի չէ, ինչը մեծացնում է բովանդակության յուրացման և մատուցման մեթոդների խնդիրը: Հետևաբար, ժամանակակից ընթերցողի հետաքրքրությունը շարժելու համար անհրաժեշտ է նյութի նորօրյա ուսումնասիրություն, որը հնարավորություն կտա նոր հայացքով դիտարկելու Օշականի փոքր արձակում արծարծված այնպիսի խնդիրներ, որոնց հանդեպ ժամանակակից մարդաբանական գիտությունները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Այդ հարցերից են, ասենք, գենդերային և հոգեֆիզիոլոգիական խնդիրները: Ազգագրական շերտերի ուսումնասիրությունը պայմանավորված է համաշխարհայնացման ներկա պայմաններում ազգային ինքնության բաղկացուցիչներին անդրադառնալու անհրաժեշտությամբ: Գրողի եղեռնապատումին անդրադարձն արդարացվում է այդ թեմայով գրված, սակայն ուսումնասիրողների ուշադրությունից դուրս մնացած որոշ գործերի հանգամանքով: Իսկ Օշականի արծարծած գրականագիտական հարցերի նկատմամբ հետաքրքրությունը, կարծում ենք, մեծ է նաև ներկայումս:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը հեղինակի փոքր արձակի («Խոնարհները», «Խորհուրդներու մեհեանը», «Երբ պատանի են», «Կայսերական յաղթերգութիւն», «Հինէն ու նորէն», «Երբ պզտիկ են» գրքերն ու շարքերը) համակողմանի, իսկ մասնավորապես նրանում դրսևորված հոգևոր արժեքների և բնազդային երևույթների մեկնաբանությունն է: Երբեմն առանձին, երբեմն միասին, երբեմն էլ հակադրամիասնության մեջ հանդես եկող այս երևույթները քննել ենք աշխատանքի թեմատիկ ընդգրկումներից յուրաքանչյուրում՝ ըստ անհրաժեշտության:

Աշխատանքում առաջ քաշված խնդիրներին օշականագիտության մեջ անշուշտ անդրադարձ եղել է, սակայն ակնարկումների և ընդհանուր վերլուծության տեսանկյունից: Առանձին չեն դիտարկվել նրա փոքր արձակում ժողովրդական բարքերի ու սովորույթների պատկերները, հեքիաթները, «փոքր մարդու» դրամայի, պատանի հերոսների հասունացման խնդիրները, գենդերային հարցերը, եղեռնապատումի ամբողջական համակարգը, հեղինակի տեսական հարցադրումները: Աշխատանքի հիմնական նպատակն է ցույց տալ ինչպես դեռահաս հերոսների կյանքի, հասունացման ընթացքի հոգեբանական առանձնահատկությունները, այնպես էլ հասուն տարիքի «փոքր մարդու» վարքագիծը և գործունեությունը պայմանավորող ներհոգեկան ու արտաքին ազդակները, հերոսների վարքի՝ սոցիալ-մշակութային գործոններով պայմանավորված առանձնահատկությունները, ազգագրական շերտը, հեղինակի տեսական-գեղագիտական ըմբռնումները, պոետիկան, որի իրագործման համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1 . Ներկայացնել Օշականի պատմվածքների ազգագրական և բանահյուսական շերտերը՝ իբրև հայրենի կորուսյալ գյուղաշխարհի հոգևոր մշակույթի և հայ հոգու կենդանի արտացոլումներ:

2. Ներկայացնել «փոքր մարդու» հոգեկերտվածքի օշականյան մեկնաբանությունները, գենդերային և հոգեսեռական խնդիրների արծարծումները՝ իբրև հեղինակի կողմից դիտարկվող հոգևորի և բնազդայինի հակադրամիասնության դրսևորումներ, ինչպես նաև դրանց նկատմամբ հեղինակային վերաբերմունքի դրսևորումները:

3. Ցույց տալ եղեռնապատումի առանձնահատկությունները և պարզաբանել հեղինակի դիրքորոշումը եղեռնի պատճառների ու հետևանքների վերաբերյալ, ներկայացնել գրողի վերաբերմունքը՝ իբրև հոգևոր արժեքների կորստի համար սգացողի և ոճրագործի բնազդային հակումները քննադատողի, քննել եղեռնի անմիջական տպավորությունների տակ գրված գործերի տեսական-գեղարվեստական հարցադրումները:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Օշականի գրականության ուսումնասիրությունը, սկսած 1922-ից, մշտապես եղել է հայ գրականագիտության դիտակետում: Ուսումնասիրվել է նրա ինչպես գեղարվեստական, այնպես էլ գրականագիտական ժառանգությունը: Ընդհանուր առմամբ թեմային վերաբերող խնդիրները ներկայացվել են առանձին ուսումնասիրություններում, մենագրություններում, գիտական հոդվածներում:

Օշականագիտության մեջ առանցքային կարևորություն ունի հենց հեղինակի «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» բազմահատոր

ուսումնասիրության 10-րդ հատորը՝ վերնագրված «Վկայութիւն»[1] (1944թ.)՝ ամբողջովին նվիրված իր իսկ գործերի քննությանը: Անդրադառնալով իր անձի, կենսագրության, գրական սկզբնական քայլերի և ստեղծագործությունների համապարփակ վերլուծությանը՝ Օշականը միաժամանակ վերլուծում է հայաշխարհի կյանքը, ներկա կացությունը, հայ-թուրք հարաբերությունների խնդիրը: Իր գրական ստեղծագործությունները դիտարկում է հայ և համաշխարհային, հատկապես ֆրանսիական և ռուսական գրականության առնչությունների շղթայում:

Նշանակալից է Նշան Պեշիկթաշլյանի «Յակոբ Օշական. կեանքը եւ գործը իրաւ երգիծաբանութիւնով»[2] գրքույկը: Թեև այն շարադրված է ոչ թե գրականագիտական հիմնավորումներով, այլ զգացական վերաբերմունքի դրսևորումներով, այնուամենայնիվ արժեքավոր է որպես Օշականի կյանքը և ստեղծագործությունը ժամանակագրական կարգով ներկայացնող առաջին ուսումնասիրություն:

Օշականի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, արևմտահայ և սփյուռքահայ գրողների շարքում նրա տեղն ու դերը ներկայացնող գործերի շարքում կարևոր է Մինաս Թեոլեոլյանի «Դար մը գրականություն»[3] ուսումնասիրությունը և Վազգեն Գաբրիելյանի «Սփյուռքահայ գրականություն»[4] ուսումնական ձեռնարկը, որոնցում, ի թիվս սփյուռքահայ այլ գրողների, ծավալուն գլուխներով ներկայացված է Օշականի գրական դիմանկարը:

Ուշարժան է Շուշիկ Տասնապետյանի «Յակոբ Օշականի վէպը»[5] գիրքը, որի առաջին գլխում խոսվում է նորավեպից վեպ անցումների մասին, ընդհանուր ակնարկով նշվում գրողի վեպերի գաղափարական-գեղարվեստական շրջանակը: Աշխատանքի հիմնական մասը նվիրված է «Ծակ-Պտուկը», «Սյուլեյման էֆենդի» և «Մնացորդաց» վեպերի քննությանը:

Արժեքավոր է Գրիգոր Պըլտյանի «Մարտ[6] մեծածավալ ուսումնասիրությունը, որի հիմնական մասը նվիրված է Օշականի գեղարվեստական և գրականագիտական ժառանգության ուսումնասիրությանը: «Հակոբ Օշական և արևմտահայ նորավեպը» հոդվածում

---

[1] **Օշական Յ.,** Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, Անթիլիաս, տպարան «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», 1982, 646 էջ:

[2] **Պէշիկթաշլեան Ն.,** Յակոբ Օշական: Կեանքն ու գործը իրաւ երգիծաբանութիւնով, Պարիզ, տպարան «Յ.Ֆ. Ճարեան», 1947, 40 էջ:

[3] **Թէօլէօլեան Մ.**, Դար մը գրականութիւն, հատ. Ա, Գահիրէ, «Յուսաբեր» հրատ., 1955, 732 էջ:

[4] **Գաբրիելյան Վ.,** Սփյուռքահայ գրականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 423 էջ:

[5] **Տասնապետեան Շ.**, Յակոբ Օշականի վէպը, Պէյրութ, «Վահե Սէթյան» տպարան, 1994, 126 էջ:

[6] **Պըլտեան Գր.**, Մարտ, Անթիլիաս, տպարան «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», 1997, 590 էջ:

հեղինակը արևմտահայ նորավիպագիրների գործերի համապատկերում հանգամանորեն քննում է Օշականի նորավիպագրության առանձնահատկությունները՝ հիմք ունենալով «Խոնարհները» ժողովածուն: «Առաջին գրութիւնը» հոդվածում քննադատը Օշականի առաջին գրական ստեղծագործությունը՝ «Առաջին արցունքը» պատմվածքը դիտարկում է որպես ծրագրային գործ՝ նրանում նկատված առանձնահատկությունների և Օշականի այլ գործերում նմանատիպ մտքերի և զուգորդությունների միջոցով նշելով գրողի պոետիկայի առանձնահատկությունները: Քննադատն ուսումնասիրության առանձին նյութ է դարձրել «Խոնարհները» շարքի տեղավայրերը՝ դրանք դիտարկելով ոչ թե սոսկ տեղագրություններ, այլ որպես խորհրդանշական վայրեր՝ ներսի ու դրսի հակադրությամբ քննելով բարոյական այն մթնոլորտը, որում ձևավորվել է հերոսների ներաշխարհը: Մեկ այլ հոդվածում «Խենթ-Սողմեն» պատմվածքը դիտարկվում է որպես նորավեպից վեպ անցման օղակ: Քննվում են նշյալ պատմվածքի և Օշականի վիպական համակարգի, մասնավորապես «Ծակ-Պտուկ»-ի հետ ունեցած առնչությունները: Հանգամանորեն քննվում են «Շահպազը» վիպակի հերոսների խոտորման ու շեղման պատճառները: Ծավալուն գլուխներ կան հատկացված Օշականի վեպերի և քննադատության առանձնահատկություններին:

Օշականի արձակի նկարագիրը պարզող արժեքավոր հետազոտություն է Կիմ Աղաբեկյանի «Հակոբ Օշական. ստեղծագործական աշխարհի արահետներում»[7] ուշարժան մենագրությունը, որտեղ հեղինակը վկայակոչում է կենսագրական մանրամասնություններ՝ դրանց միջոցով ներկայացնելով գրողի մտածողությունը, հոգեկան հատկանիշները, բնավորության գծերը, ստեղծագործության ժանրային, թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները:

Կարևոր է Մարի Ռոզ Աբուսեֆյանի «Հակոբ Օշականի «Հարյուր մեկ տարվան» [8] եռագրությունը» ուսումնասիրությունը, որում, ներկայացնելով Օշականի մարդկային և ստեղծագործական դիմանկարը, հեղինակը քննության հիմնական նյութ է դարձրել Օշականի «Ծակ պտուկը» և «Հարյուր մեկ տարվան» եռագրության վեպերը՝ կենտրոնանալով հայ-թուրք արժեհամակարգերի և ազգային բնավորության ճանաչողության խնդիրների վերհանման վրա:

Փոքր արձակի եղեռնապատումի առանձնահատկությունների ուսումնասիրության առումով կարևոր են Ռուբինա Փիրումյանի[9] և Մարի Ռոզ

---

[7] **Աղաբեկյան Կ.**, Հակոբ Օշական, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 273 էջ:

[8] **Աբուսեֆյան Մ. Ռ.**, Հակոբ Օշականի «Հարյուր մեկ տարվան եռագրությունը», Երևան, «Գասպրինտ» հրատ., 2011, 273 էջ:

[9] **Փիրումյան Ռ.,** Սփյուռքահայ գեղարվեստական գրականությունը Մեծ եղեռնի մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1990, թիվ 2, էջ 14-31:

Աբուսեֆյանի[10] դիտարկումները: Փիրումյանը սփյուռքահայ եղեռնապատումի գրականության համապատկերում ներկայացնում է Օշականի բերած նորությունները, այն է՝ թուրքի կերպարը խորացնելու, գեղարվեստական դրվագները տարբեր տեսանկյունից ներկայացնելու և թուրքի դիտանկյունից կոտորածը պատկերելու վարպետությունը՝ փոքր արձակի գործերից անդրադառնալով միայն «Կայսերական յաղթերգութիւն» շարքին:

Մարի Ռոզ Աբուսեֆյանը ևս իր «Հայոց ցեղասպանության արտացոլումը Հակոբ Օշականի գործերում» հոդվածում փոքր արձակի գործերից ուսումնասիրության նյութ է դարձրել «Կայսերական յաղթերգութիւն» շարքը՝ կենտրոնանալով եղեռնի հոգեբանական հետևանքների և ազդեցությունների վրա:

Աշխատանքի գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը Օշականի փոքր արձակին նվիրված առաջին համապարփակ ուսումնասիրությունն է, որն արված է հատկապես հոգևոր և բնազդային երևույթների քննության համատեքստում: Դույզն-ինչ չստվերելով նախորդների աշխատանքը՝ առաջին անգամ են ամբողջական քննության ենթարկվում փոքր արձակի ազգագրական և բանահյուսական շերտերը: Ներկայացրել ենք գյուղի տոների, բարքերի ու սովորույթների, առօրյայի և կենցաղի համապատկերը և դրանց ազդեցությամբ ձևավորված հերոսների հոգեբանությունն ու ըմբռնումները, քննել «հեքիաթների» թեմատիկ-բովանդակային խնդիրները և ժանրային առանձնահատկությունները:

Քննել ենք «փոքր մարդու» դրամայի գրողի ընկալումները՝ դրանք զուգահեռելով հատկապես արևմտահայ նշանավոր արձակագիր Երուխանի խնդրադրումների հետ: «Խոնարհները» ժողովածուն ուսումնասիրել ենք այսօրեական մարդաբանական գիտությունների կողմից շրջանառվող գենդերի սոցիալական հոգեբանության տեսանկյունից: Հոգեբանական ժամանակակից տեսությունների հիմնավորումով ուսումնասիրել ենք պատանի հերոսների սեռական կյանքի հոգեբանական առանձնահատկությունները, նրանց վարքագիծն ու գործունեությունը պայմանավորող երևույթները:

Ուսումնասիրել ենք Օշականի եղեռնապատումի առանձնահատկությունները: Հաշվի առնելով «Կայսերական յաղթերգութիւն» ժողովածուի մասին արված գրականագիտական դիտարկումները՝ Օշականի եղեռնապատումի համակարգն ամբողջացրել ենք ուշադրությունից դուրս մնացած «Հինէն ու նորէն» և «Երբ պզտիկ են» շարքերի դիտարկումներով: Աշխատանքում կենտրոնական տեղ է հատկացվել Օշականի գրեթե չուսումնասիրված երկերից մեկին՝ «Մահուան ծաղիկներ» շարքին՝ շեշտը դնելով տեսական հարցադրումների մեկնաբանության վրա:

---

[10] **Աբուսեֆյան Մ., Ռ.,** Հայոց ցեղասպանության արտացոլումը Հակոբ Օշականի գործերում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2013, թիվ 3, էջ 35-43:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսության թեմատիկ ընդգրկումը հնարավորություն է տալիս խնդիրն ուսումնասիրել հերմենևտիկայի, հոգեվերլուծության, կենսագրական, կուլտուր-պատմական, գենդերային հոգեբանության և պատմահամեմատական մեթոդներով:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ներածության մեջ անդրադարձել ենք Օշականի փոքր արձակի նորովի մեկնաբանության անհրաժեշտությանը, ներկայացրել հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորել թեմայի արդիականությունը, գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ

Առաջին գլխում, որը կազմված է երկու ենթագլխից՝ «Բարքերի ու սովորույթների համապատկերը» և «Բանահյուսական պատմությունը՝ բնաշխարհի քնարական պատկեր», քննվում են ժողովրդական ստեղծագործությունների և կացութաձևի առանձնահատկությունները, որպես հայ հոգու արտացոլումներ՝ վերլուծվում են հերոսների բնավորության գծերը, կրոնական ըմբռնումները և հավատալիքները, ներկայացվում է բարքերի ու սովորույթների ազդեցությամբ ուղեկցվող հերոսների ներաշխարհը՝ հոգու և մարմնի պայքարի առթած դրամատիզմով:

Օշականի փոքր արձակը, հատկապես «Խոնարհները» և «Խորհուրդներու մեհեանը» գրքերը, հայ գյուղի կյանքը ներկայացնող մեր գրականության լավագույն էջերից է: Նրա յուրաքանչյուր պատմվածք՝ իր ուրույն շեշտով ու գունագեղությամբ, գրողի բնաշխարհի հոգևոր արժեքների՝ տոների ու ծիսակատարությունների, բարքերի ու սովորությունների մի կենդանի պատկեր է, իսկ դրանց ամբողջությունը՝ գյուղի համապատկերը: Այս ամենն Օշականն ի ցույց է դնում ոչ միայն նկարագրությունների միջոցով, այլև հերոսների հոգեբանության բացահայտումների համադրությամբ: «Մարդկային տրամա»-յի բացահայտումներն Օշականն իրականացնում է իր որդեգրած սկզբունքներով ցույց տալ կյանքը համակողմանիորեն՝ պատկերելով ինչպես իդեալականացված գյուղաշխարհի հոգևոր արժեքները, այնպես էլ բնազդային, ընդհուպ հոգեախտաբանական երևույթները:

Ստացվում է, որ իր արձակում Օշականը պատկերում է որոշակի ***ժամանակաշրջանում***, որոշակի ***վարքուբարքով*** ապրող ***մարդկանց***

ներաշխարհը՝ իր արձակում արտացոլելով Հիպոլիտ Տենի ցեղ-միջավայր-պահ հայտնի սկզբունքը: Դրա կիրարկումն ակնհայտ է նաև 1922 թվականին Կ. Պոլսում հրատարակած «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուի «Հէքեաթներ» շարքում:

Թեպետ գրվածքների մեծ մասն ունի «Հեքիաթ»՝ որպես ժանրը բնութագրող ենթավերնագիր, կամ պարզապես վերնագրված է «Հեքիաթ», այս գործերը, սակայն, անվերապահորեն հեքիաթ համարելը ճիշտ չէ: Նշված շարքի գործերին բնորոշ է տարբեր ժանրերի հատկանիշների համադրումը: Հեղինակն առանձնապես չի կարևորում ժանրի խնդիրը, քանի որ իր գլխավոր նպատակը հայրենի գյուղի համապատկերը, բարքերն ու սովորույթները, գյուղի մարդկանց հոգեկան ներաշխարհը բացահայտելն է, որի համար որպես սնող աղբյուր հանդիսացել են ժողովրդական բանահյուսությունը, ժողովրդի և իր կյանքի պատմությունը, իրական կյանքը: Հեղինակը պատմում է զրույցներ, որոնք չի էլ հիշում, թե երբ և ումից է լսել՝ տալով դրանց ավանդություններ անվանումը: Ավանդազրույցները հնարավորություն են ընձեռում ֆրոյդիզմի լույսով քննելու սիրո և մահվան՝ էրոսի և թանատոսի կապը՝ ***սեռ, մեղք, պատիժ*** բառիմաստները դիտարկելով որպես բնազդային-անգիտակցականի՝ Ֆրոյդի բնորոշումով՝ ***Այն***-ի նշաններ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԴՐԱՄԱՆ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ

Երկրորդ գլխում, որը կազմված է երեք ենթագլխից՝ ««Փոքր մարդու» դրաման գրողի դիտակետում», «Գենդերի սոցիալական հոգեբանության դրսևորումը «Խոնարհները» պատմվածաշարում» և «Դեռահաս հերոսների հասունացման հոգեբանական նրբերանգները», քննվում են գրողի դիտակետում հայտնված «փոքր մարդու» դրաման, «Խոնարհները» պատմվածաշարում առկա գենդերային հարցերի շրջանակը և **դ**եռահաս հերոսների հասունացման հոգեբանական նրբերանգները**:**

Արևմտահայ գրականության, հատկապես արձակի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1880-ական թթ. իրապաշտական (ռեալիստական) շարժումը: Օշականի ստեղծագործությունները, ընդհանուր գծեր ունենալով 80-ական թթ. հայ ռեալիստների ստեղծագործությունների հետ, ժամանակային և գեղարվեստական որոշ առումներով առավել մոտ են Երուխանի գործերին: Երկու գրողներն էլ ստեղծագործում էին նույն սկզբունքով՝ տալ կյանքի ճշմարտացի պատկերը: Սրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ Երուխանն իր ժողովածուն անվանել էր «Կեանքին մէջ» (1910թ.), իսկ Օշականն էլ տարբեր առիթներով սիրում էր կրկնել, թե գրականության մեջ պետք է արտահայտել «իրաւը» և,

անդրադառնալով իր իսկ գործի գնահատությանը, գրել է. «Օշականի վէպին տիրական օրէնքը օրէնքն է կեանքին»[11]:

Երուխանը և Օշականը իրենց գործերում ներկայացրին մարդկանց իսկ կողմից արհամարհված, հասարակությունից մեկուսացած, խեղճ ու աղքատ մարդկանց հոգեբանությունը: Ռեալիստական գրականության ընդհանուր համապատկերում Երուխանի ստեղծագործությունը առանձնանում է նրանով, որ «փոքր մարդու» կյանքի պատկերումը, դրանով իսկ ժամանակի սուլթանական իրականությանը մեղադրելը դառնում է նրա գրականության հիմնահարցը: Իսկ Օշականը պատկերում է այս գյուղացիների ոչ թե առօրյա չարքաշ կյանքը, այլ բացահայտում է սիրո և սեռի առթած ցավն ու տառապանքը՝ դրանով իսկ հայ գրականության մեջ մարդու ներաշխարհը բացահայտելու գործում առաջադրելով նոր մոտեցումներ:

Ինչպես նշեցինք, «Խոնարհներ»-ում Օշականը կերտել է առավելապես մարդկային մի տեսակի՝ աղքատների, խեղճերի, խենթերի կերպարներ, որոնց տալիս է մեկ ընդհանրական անուն՝ ***խոնարհներ,*** իսկ մասնավորապես՝ ***քոքուրներ***: Քոքուրները մտավոր, ֆիզիկական արատով կամ ճակատագրի բերումով «հոգով քոքուր» դարձած անձինք են, հիմնականում՝ տղամարդիկ՝ զուրկ ենթադրյալ տղամարդկային հատկանիշներից: Ահա այս առանձնահատկությունները գենդերային խնդիրների ուսումնասիրության լայն հնարավորություն են ընձեռում:

«Խոնարհներ»-ի կերպարները մեծ մասամբ ունեցել են իրենց նախատիպերը, և հեղինակը ճանաչել է նրանցից շատերին, ծանոթ է եղել նրանց ներաշխարհին: «Երկինքէն ինկող կինը» պատմվածքը ընդհանրացնում է քոքուրների հոգեվիճակը, նրանց ձգտումները, սերերը, երազը՝ ցույց տալով քոքուրների «գերագոյն տագնապը, որ կնիկն էր», կին ունենալու սպասումը, տարփանքը: Սակայն հասարակությունը զլանում է նրանց կին տալ, որից էլ ծնվում է քոքուրների դրաման:

Ներկայացվածը հերոսների կյանքի և վարքագծի ընդհանուր բնութագրական-նկարագրական պատմությունն է: Եվ քանի որ գենդերի սոցիալական հոգեբանության համար հոգեբանները առավելապես կարևորում են գենդերային նույնականության հոգեբանական և ֆունկցիոնալ-դերային մակարդակները[12], և, հաշվի առնելով, որ Օշականի գործերում գենդերային նույնականության և տարբերության երևույթներ նկատվում են առավելապես այս մակարդակներում, հերոսների վարքագիծն ատենախոսության մեջ քննվում է մեթոդաբանական հետևյալ դիրքերից: Ուշադրության են արժանացել **գենդերային նույնականության օբյեկտիվ և սուբյեկտիվ**

---

[11] **Օշական Յ.,** Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 110:

[12] Տե՛ս, **Խաչատրյան Ն. Գ.,** Գենդերի սոցիալական հոգեբանություն, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2007, էջ 141:

կողմերը, սոցիալ-հոգեբանական խնդիրները, ֆունկցիոնալ-դերային մակարդակները:

Ինքնակենսագրական տարրեր պարունակող Օշականի «Երբ պատանի են» վիպակում (1926 թ.) և «Ծակ-պտուկը» վեպում (1928 թ.) առավելապես արտացոլված են դեռահաս հերոսների հասունացման հոգեբանական նրբերանգները: Մանկության և պատանեկության թեման նորություն չէր հայ գրականության մեջ, սակայն նոր էր Օշականի մոտեցումը, որով նա փորձում էր ամբողջականացնել դեռահասի կերպարը: Նա համոզված էր, որ պատանիների համար, անկախ սոցիալ-մշակութային նորմերից ու արժեքներից, առավել կարևորվում են սեռական ապրումները. «Ըլլա՛յ անիկա քաղաքի մը մէջ, ըլլա՛յ գեղին այգիներուն խորը, պատանի է, որուն համար աշխարհին միւս բոլոր ապրումները գրեթէ կշիռ չունին, բացի այդ մէկէն»[13]: Ուստի Օշականն իր պատանի հերոսների ներաշխարհը բացահայտում է այդ լույսի ներքո:

Դեռահաս հերոսների սեռական զարգացման հոգեբանական առանձնահատկությունները, նրանց վարքագիծը պայմանավորող ներհոգեկան, ինչպես նաև արտաքին պատճառները ցույց տալու համար որպես առանցքային կերպարներ առանձնացրել ենք «Երբ պատանի են» վիպակի պարմանի հերոսին: Զուգահեռներ ենք անցկացրել «Ծակ-պտուկը» վեպի գլխավոր հերոսուհու՝ Նազիկի կերպարի հետ, քանի որ այս վեպում գրողը ընդլայնում է պատանիների հասունացման հոգեբանական խնդիրների սահմանները՝ հնարավորություն տալով ամբողջացնելու այդ հարցերի արծարծման գեղարվեստական համակարգը:

Օշականի հերոսների հոգեսեռական առանձնահատկությունների զարգացման ընթացքը համեմատելիս առավել տեսանելի են դառնում հերոսների՝ կյանքից և հակառակ սեռից ստացած ***առաջին*** տպավորությունները, այդ տպավորությունների ***զարգացումները*** և առաջացրած հակազդումների գեղարվեստական պատկերները:

Օշականի հիշյալ երկերի դիպաշարերը զարգանում են հոգեբանական գործողություններով, որոնց խորքում գործում են երկու առանցքային՝ սեռական և մահվան (էրոս և թանատոս) բնազդներ: Քննվող երկերը ընթերցողի ուշադրությունը առարկայական աշխարհից դեպի հերոսների ենթագիտակցական և անգիտակցական աշխարհն են շեղում՝ արտացոլելով ֆրոյդյան անգիտակցական և ենթագիտակցական ոլորտների աշխատանքը պարզաբանող հիմնադրույթները: Գրողը ցույց է տալիս, թե մանկությունը, նախնական տպավորությունները, երազները, ենթագիտակցական ոլորտներում կուտակված զգացումներն ինչպես են հետագայում «մասնակցում» նրանց կյանքին: Ըստ Օշականի՝ մանկությունն է այն ժամանակահատվածը,

[13] **Օշական Յ.,** Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 121:

«որի մեջ մարդը, ապագա մարդը կշինվի, և ուր կերտված մարմինը իր կնիքը կուտա մարդուն մնացած օրերուն»[14]: Հետևապես, մանկության կարևորումը դառնում է Օշականի գրականության առանցքային հարցերից մեկը, որին գրողը անդրադարձել էր դեռևս իր առաջին՝ «Խոնարհները» ժողովածուում:

Պետք է նկատել, որ Օշականի պատանի հերոսների համար սեռը դառնում է ***ինքնաճանաչողության բանալի***: Հերոսներին օժտելով բարձր բանականությամբ՝ գրողը նրանց մղում է ինքնաճանաչողության: Պատանիները զգայական մակարդակից աստիճանաբար բարձրանում են դեպի իմացականը, հասնում ինքնաճանաչողության: Նրանք սոցիալականացման ընթացքում ընկալում են հասարակական ու մշակութային երևույթները, իսկ հետո վերափոխում դրանք սեփական արժեքային դիրքորոշումներին համապատասխան: Սա էլ այն առանձնահատկությունն է, որը աղջիկների պարագայում պատճառ է դառնում ըմբոստանալու գյուղի բարքերի դեմ, որակվելու «ծակ պտուկ»՝ ոչ կույս, և կնքելու մահկանացուն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ

Երրորդ գլխում, որը կազմված է երկու ենթագլխից՝ ««Մահուան ծաղիկներ» շարքը» և «Եղեռնի գեղարվեստական արձագանքը», քննվում են եղեռնապատումի առանձնահատկությունները**:** Վեր են հանվել եղեռնի անմիջական տպավորությունների տակ գրված գործերի տեսական, ինչպես նաև գեղարվեստական առանձնահատկությունները, քննվել են գրողի մահախուճապ կյանքի դրվագները:

Օշականը՝ արևմտահայ գրականության «վերապրող» կամ «մնացորդաց» սերնդի գրողներից մեկը, նույնպես կարողացավ խույս տալ Մեծ եղեռնից: Գրողի մահախուճապ կյանքի այդ դրվագը իր գեղարվեստական արտահայտությունն է գտել նաև 1922 թ. Պոլսում հրատարկված նրա «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուի «Մահուան ծաղիկներ» շարքում: Այդ օրերի վավերագրությանը հանդիպում ենք նաև 1944 թթ. գրված (տպագրված 1982-ին) «Վկայութիւն» աշխատության մեջ, որտեղ Օշական քննադատը վերլուծում և գնահատում է իր՝ Օշական գրողի գրական-գեղարվեստական վաստակը: Աշխատության «Վիպողը» գլխում Օշականը քննում է նաև «Մահուան ծաղիկներ» շարքի գեղարվեստական առանձնահատկությունները, իսկ տողատակերի ընդարձակ ծանոթագրության մեջ ներկայացնում է փախստականի՝ մահվան սարսափով լի իր կյանքը:

[14] **Օշական Հ.**, Երկեր, էջ 30:

Շարքի վերնագրի ընտրությունը՝ «Մահուան ծաղիկներ», անշուշտ, խորհրդանշական իմաստ ունի: Վերնագրի «մահ» բաղադրիչը աղետների, իսկ «ծաղիկներ» բաղադրիչը աղետներից վերածնման և գոյատևման խորհուրդն են ամփոփում: Կյանքի և մահվան գաղափարի արտահայտման հարցում Օշականի գեղարվեստական պատկերները թեև բազմազանություն չեն դրսևորում, բայց ասելիքն արտահայտում են կյանք-մահ զույգային ակնհայտ հակոտնյաների միջոցով: Ի տարբերություն 20-րդ դարասկզբի՝ մահվան և կոտորածների թեման շոշափող գրականության, Օշականի «Մահուան ծաղիկներ»-ի բուն տեքստերն իրենցից ներկայացնում են այլևայլ երևույթների վերաբերյալ խորհրդածությունների և տպավորությունների պատկերներ՝ գրված Եղեռնի անմիջական տպավորությունների ներքո: Այս հանգամանքը թույլ է տալիս տեսնելու այն զորավոր կապը, որ գոյություն է ունեցել հեղինակի բնազդային վախերի և դրան մշակութային գործունեությամբ հակադրվելու ցանկության միջև:

Այսպիսով՝ «Համապատկեր»-ում նշված իրական փաստերի, քննադատական դիտարկումների, վերոնշյալ գործի նախաբանի, ինչպես նաև «Մեհեան» հանդեսում (1914, Կ. Պոլիս) առկա տեսական-գեղագիտական ըմբռնումների համադրությունը ընթերցողին օգնում է թափանցելու «Մահուան ծաղիկներ» շարքի արտահայտած զգացողությունների տիրույթը, որը մեկնաբանման առումով բավականին բարդ է, քանի որ տեսական և գեղարվեստական առանձնահատկությունների ամբողջություն է, իր բառերով ասած՝ «առեղծուածային թնճուկ, զոր քիչեր պիտի հասկնան»[15]: Շարքի տեսական և գեղարվեստական խաչաձևվող հարցադրումներն ու մտքերը, ատենախոսության մեջ ներկայացրել ենք որոշակի առանձնացումներով՝ քննելով **ժանրի և գրող-ընթերցող կապի խնդիրը, «Մեհեան» հանդեսի տեսական-գեղագիտական ուղղությունների արծարծումները: Հունական առասպելաբանության շերտերը և սյուժետա-բովանդակային** հարցերը հիմնականում դիտարկվել են էրոսի և թանատոսի փոխառնչության տեսանկյունից: Խորհուրդների՝ խոհերի այս մատյանում Օշականի մտորումների և վերլուծումների ծիրում են հայտնվում մարդկային կյանքի հակադիր իրողությունները, հատկապես կյանքի և մահվան երևույթները: Պատճառները, ինչպես արդեն նշել ենք, կապված էին ազգային ողբերգության, թուրք ոստիկանների շարունակական հետապնդումների հետ, որոնք սրել էին գրողի զգացողություններն ու մահվան բնազդը: Կյանքի՝ էրոսի, սեռի նկատմամբ ունեցած առանձնահատուկ հետաքրքրությունը, հոգևոր արժեքներ արտադրելու անխոնջ փորձերը, փաստորեն, մահվանը հակազդելու ձգտումով են պայմանավորված: Կյանքի և մահվան գաղափարով է պայմանավորված

[15] **Օշական Յ.,** Խորհուրդներու մեհեանը, Կ. Պոլիս, «Լուսաղբիւր» հրատ., 1922, էջ 123:

գունապատկերներում կարմիրի գերակշռությունը, որը կարելի է դիտարկել և՛ որպես կրքի ու կյանքի, և՛ որպես մահվան նշան:

Եղեռնի **գեղարվեստական արձագանքները** քննել ենք հեղինակային վերաբերմունքի տեսանկյունից: Մի դեպքում՝ որպես հայ ստեղծագործ ժողովրդի հոգևոր արժեքների փառաբանություն, մյուս դեպքում՝ թուրք ցեղին բնորոշ ոչնչացման անհագուրդ բնազդի հետևանքով այդ ժառանգության ոչնչացման քննադատություն:

«Կայսերական յաղթերգութիւն» շարքն ունի առաջաբան, որտեղ ժողովրդի քաղաքական հարցերին անդրադարձող գրողը գնահատում է պատմական երևույթները, 20-րդ դարասկզբի աշխարհաքաղաքական այն իրավիճակը, որի զոհը դարձավ հայ ժողովրդի մի զգալի հատվածը: Գրողը հայ ժողովրդի պատմությունը գնահատելիս հանդես է գալիս սթափ քննադատությամբ: Նա կոտորածների ու կորուստների պատճառները որոնում է ոչ միայն արտաքին թշնամու քաղաքականության մեջ, այլև վրիպումներ և բացթողումներ է մատնանշում ազգային կյանքում և հայի հոգեկերտվածքում:

Հայ ժողովրդի հոգեկան արժեքների և թուրք ցեղի բնազդային մղումների հակադրությունը գեղարվեստական նոր լուծումներով, այն է՝ հնի և նորի սահմանագծին հայտնված հեղինակ-հերոսի վերաբերմունքի պատկերումներով, տեսանելի է «Հինէն ու նորէն» շարքում. այստեղ գերակշռողը հայ մշակութային իրողությունների և դրանց արժևորումների պատկերումներն են: Երկերն ավարտվում են այդ արժեքների վախճանի մասին հեղինակային դիտարկումներով: Այդ դիտարկումները, որոնցում բացակայում են ազգություն նշող բառերը, միաժամանակ դառնում են թուրք ազգի վարքագիծն ու գործողությունները բնազդային մղումներով պայմանավորող մեկնաբանություններ:

Եղեռնպատումի քննվող պատկերներում ընդհանրության մեջ գործում են հոգևորի և բնազդայինի սկզբունքները՝ կյանք-մահ, ցեղասպանություն-սերնդագործություն, կործանում-նորոգում, հին-նոր զույգային հակոտնյաների միջոցով հանգելով ազգային բնավորության, ճակատագրի ու գոյության իմաստավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակոբ Օշականի փոքր արձակը հոգևոր արժեքների և բնազդային երևույթների տարակերպ փոխառնչութունների մի պատկերահամակարգ է՝ պայմանավորված գրողի գեղագիտական հայացքի յուրահատկությամբ՝ պատկերել կյանքը ցմրուր, ընդհուպ հոգեախտաբանական երևույթները, և դրամատիկ իրադարձությունների պատճառով մահվան սրված բնազդի և դրան կյանքով՝ նախ՝ ստեղծագործական մղումով, ապա իր ստեղծագործության մեջ սեռի խնդիրների նկատմամբ հետաքրքրությամբ:
2. Իր պատկերակերտումներով Օշականը հավատարիմ է մնում հայ գրողի համար կարևորվող իր իսկ առաջադրած նախապայմանին՝ գրականության մեջ արտահայտել այն, ինչը «հայեցի» է, «հայ հոգին» է՝ կերպարների ներաշխարհը քննելով ցեղ-միջավայր-պահ հայտնի սկզբունքի կիրառումով:
3. Հայ գյուղն իր կենցաղով, բարքերով, հոգեկան և բարոյական աշխարհով Օշականի գրականության առանցքն է, լավագույնս արտացոլում է գրողի վաղ մանկության, պատանեկության և երիտասարդության տարիների ժողովրդագիտությունը: Գյուղական պատկերներն ի ցույց են դրվում ոչ միայն տեղագրության, բարքերի ու սովորույթների, տոների ու ծեսերի նկարագրությունների միջոցով, այլև հերոսների ներաշխարհի հոգեբանական զննումների համադրությամբ՝ բացահայտելով ինչպես հոգևոր արժեքներին հետամուտ, այնպես էլ բնազդային մղումներով հատկորոշվող կերպարների հոգեաշխարհը:
4. Թեև «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուի «Հեքիաթներ» բաժնի գրվածքների մեծ մասին հեղինակը տվել է «Հեքիաթ»՝ որպես ժանրը բնութագրող ենթավերնագիր, կամ պարզապես վերնագրել «Հեքիաթ», այդ գործերը, սակայն, անվերապահորեն հեքիաթ համարելը ճիշտ չէ: Դրանք աչքի են ընկնում բանահյուսական և հեղինակային հեքիաթի հատկանիշների միահյուսմամբ, որոնցում կյանքի երևույթներին տրված սեփական գնահատականներով, կենսագրական մանրամասներների հիշատակումով հեղինակը վերապատմում է իր լսած զրույցները՝ տալով դրանց ավանդություններ անվանումը: Բանահյուսական պատմությունը միջոց է՝ ներկայացնելու ծննդավայրի քնարական պատկերը, գեղարվեստականացնելու կյանքի և մահվան փոխհարաբերության, հավերժական սիրո, մարդկային արժեքների և հարաբերությունների, կնոջ առեղծվածի, ազգային ցավի մասին իր «խորհուրդները»՝ խոհերը:
5. Օշականի պատմվածքները, ընդհանուր գծեր ունենալով 1880-ական թթ. արևմտահայ իրապաշտական արձակի հետ՝ ժամանակային և գեղարվեստական առումով հետաքրքիր աղերսներ ունեն հատկապես Երուխանի պատմվածքների հետ: Ելնելով նույն՝ կյանքի ճշմարտացի

պատկերը տալու սկզբունքից՝ Օշականի նպատակն է դառնում ոչ թե հասարակության քննադատությունը, այլ «փոքր մարդու»՝ հոգեսեռական խնդիրներով պայմանավորված դրամայի վերհանումը:

6. «Խոնարհները»-ում Օշականը կերտել է առավելապես աղքատների, խեղճերի, խենթերի կերպարներ, որոնց տալիս է մեկ ընդհանրական անուն՝ խոնարհներ, իսկ մասնավորապես՝ քոքուրներ: Քոքուրները մտավոր, ֆիզիկական արատով կամ ճակատագրի բերումով «հոգով քոքուր» դարձած անձինք են, հիմնականում տղամարդիկ՝ զուրկ ենթադրյալ տղամարդկային հատկանիշներից: Հերոսներից ոմանց դրամատիկ ներաշխարհը և վարքագիծը պայմանավորված է ազգային սոցիալ-մշակութային ազդեցություններով, ոմանցը՝ որբության գործոնով, որոնց առթած հոգեբանական սահամափակումները ճնշում են հերոսների բնական ցանկությունները՝ նրանց դարձնելով սեփական բնազդների զոհեր:
7. Քննվող երկերը ընթերցողի ուշադրությունը առարկայական աշխարհից դեպի հերոսների ներաշխարհ են ուղղում՝ իրենց հիմքում ունենալով ֆրոյդյան՝ անգիտակցականի և ենթագիտակցականի աշխատանքը պարզաբանող տեսական հիմնադրույթները: Երկերի դիպաշարերը զարգանում են հոգեբանական գործողություններով, որոնց խորքում գործում են երկու առանցքային՝ սեռական և մահվան (էրոս և թանատոս) բնազդներ:
8. Իր արձակում Օշականը պատանիների հոգեբանությունը ներկայացնելու առանձնահատուկ մոտեցումներ է դրսևորում՝ բացահայտելով նրանց ներաշխարհը սեռական ապրումների լույսի ներքո: Օշականի հերոսների համար սեռը դառնում է ինքնաճանաչողության բանալի: Պատանի հերոսները զգայական մակարդակից աստիճանաբար բարձրանում են դեպի իմացականը, հասնում ինքնաճանաչողության:
9. Կենտրոնանալով դեռահասների հոգեսեռական զարգացման խնդիրների վրա՝ գրողը փորձում է ամբողջացնել առհասարակ մարդ արարածի կերպարը: Սա Օշականի ստեղծագործության այն առանձնահատկությունն է, որով նրա արձակը կարելի է դուրս բերել հայ գրականության շրջանակից և դիտարկել համաշխարհային գրականության համապատկերում:
10. Հայոց եղեռնը պատկերող գործերում որոշակիանում է ոչ միայն Օշական գրողի, այլև քաղաքագետի դիմագիծը: Օշականը հայոց եղեռնը դիտարկում է որպես նահատակ ժողովրդի շարունակ կրկնվող արյունալի պատմության դրվագներից մեկը: Եղեռնի պատճառները կապվում են ոչ միայն արտաքին հանգամանքների հետ, այլև դրանք փնտրվում են հայի և թուրքի հոգեկերտվածքում՝ բնութագրումներում շոշափելի դարձնելով

հոգևոր արժեքների հետամուտ հայի և բնազդային մղումներով հատկորոշվող թուրքի տարբերությունները:

11. «Մահուան ծաղիկներ» արձակ բանաստեղծությունների շարքը տեսական և գեղարվեստական առանձնահատկությունների ամբողջություն է: Գեղարվեստական մեթոդի առումով այն ակնհայտ նմանություն է դրսևորում սիմվոլիզմի հետ: Նկատելի են նաև դադաիզմի և իմպրեսիոնիզմի շերտերը: Շարքում Օշականը հետևել է տեսական-գեղագիտական այն ուղղություններին, որոնք առաջ էին քաշվել «մեհենականների» կողմից:
12. Շարքի գեղարվեստական պատկերների մեջ վեր է հառնում ազգային ճակատագրի, սեփական ներաշխարհի, մարդկային կյանքի և իրավ գրականության մասին խորհող գրողի կերպարը, ում վիճակվել էր ապրել դարասկզբի սարսափները և խուսափել մահից: Սրանով են բացատրվում կյանք-մահ փոխառնչության խնդրի արծարծումները, որոնք առավել ակնհայտ են հունական առասպելաբանության շերտերում: Որպես բնազդային-անգիտակցական նշանների համակարգ հանդես է գալիս ջուր-պարիկ-մուսա-նայադ-սֆինքս նշանաշարը՝ հանգեցնելով կին-կյանք զուգահեռվող գաղափարին:
13. Միֆակիրառության դրսևորումները պայմանավորված են հեթանոսական շարժման գաղափարաբանությամբ և ապացուցում են, որ գրողի գեղարվեստափիլիսոփայությունը խարսխված է հայ հեթանոսական տիեզերաճանաչողության համակարգին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Մ. Ղազարյան, Հակոբ Օշականի «Մահուան ծաղիկներ» շարքը որպես տեսական բանաձևումների շրջանակ, «Հայագիտության հարցեր», Երևան, թիվ 3 (24), 2021, էջ 149-167:
2. Մ. Ղազարյան, Դեռահասների սեռական կյանքի հոգեբանական նրբերանգները Հակոբ Օշականի արձակում, «Հայագիտության հարցեր», Երևան, թիվ 1 (16), 2019, էջ 161-175:
3. Մ. Ղազարյան, Կնոջ սեռականության ազատության և դրա պատկերման խնդիրը Հակոբ Օշականի արձակում (անգլերեն), «Հայագիտության հարցեր», Երևան, 2018, հ. 3 (15), էջ 151-157:
4. Մ. Ղազարյան, Գենդերի սոցիալական հոգեբանության դրսևորումը Հակոբ Օշականի «Խոնարհները» ժողովածուում, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2017, թիվ 4 (60), էջ 140-156:
5. Մ. Ղազարյան, Հակոբ Օշականի փոքր արձակը՝ բարքերի ու սովորույթների համապատկեր, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2016, հ. 2 (20), էջ 13-23:
6. Մ. Ղազարյան, «Փոքր մարդու» դրաման Երուխանի և Հակոբ Օշականի ժողովածուներում, «Նորք», Երևան, թիվ 1, 2016, էջ 146-155:

МАРИНЕ КАЗАРЯН

КРАТКАЯ ПРОЗА АКОПА ОШАКАНА (ПРОБЛЕМА ДУХОВНОСТИ И ИНСТИНКТА)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности ժ01.02 - «Армянская литература новейшего периода».

Защита диссертации состоится 28-го июня 2023 г. в 12:00 на заседании специализированного совета литературоведения 012 ВАК РА действующего при Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван, ул. Абовяна 52[a], корпус факультета армянской филологии ЕГУ, 202 аудитория.

Резюме

Актуальноссть темы. Произведения Акопа Ошакана, начиная с самого первого периода его творчества, были и остаются в центре внимания литературоведения. В частности, много написано о его эпическом наследии. Среди произведений малой прозы в частности был изучен сборник «Смиренные», а об остальных книгах и сериях говорилось в рамках общих отзывов. Теоретические вопросы, обсуждаемые в краткой прозе оказались почти вне подробного литературоведческого изучения.

Сегодня мало кто читает произведения Ошакана. Читатель считает их труднодоступными или непонятными. Язык произведения, особенно краткой прозы Ошакана действительно не понятен, что увеличивает проблему изучения ее содержания и применяемых методов. Следовательно, для того, чтобы вызвать к ней заинтересованность современного читателя, необходимо провести современное изучение данного материала, которое даст возможность по-новому взглянуть на такие затронутые в краткой прозе Ошакана проблемы, к которым современные антропологические науки проявляют большой интерес. К таким вопросам относятся гендерные и духовно-физиологические проблемы. Изучение национальных слоев обусловлено необходимостью. Изучение этнографических слоев обусловлено необходимостью уделения внимания компонентам национальной идентичности в современных условиях глобализации. Упоминание писателем о свидетельствующих зладеяниях оправдывается обстоятельствами некоторых работ, написанных на эту тему, однако оставшихся вне поля зрения исследователей. Мы считаем, что заинтересованность к поднятым Ошаканом литературоведческим вопросам велика и в настоящее время.

Цель и задачи исследования. Целью диссертации является всесторонняя интерпретация авторской краткой прозы, в частности проявленных в ней духовных ценностей и инстинктивных явлений. Для реализации данной цели нами поставлены следующие задачи.

1. Представить этнографические и фольклорные слои рассказов Ошакана как живые отражения духовной культуры затерянного родного поселения и армянской души.

2. Представить ошакановские трактовки о психике «маленького человека», выявлении гендерных и психосексуальных проблем, как рассматриваемые автором проявления противопоставления духовного и инстинктивного.

3. Показать особенности свидетельствующих злодеяний и выяснить отношение явтора к причинам геноцида и его последствий, представить отношение писателя как скорбящего о потере духовных ценностей и критикующего инстинктивные наклонности преступника, рассмотреть теоретико-художественные вопросы произведений, написанных под непосредственными впечатлениями от геноцида.

Научная новизна работы. Эта диссертация является первым всесторонним исследованием, посвященным краткой прозе Ошакана, написанное особенно в контексте изучения духовных и инстинктивных явлений. Не затмевая работы предшественников, впервые полностью исследуются этнографические и фольклорные слои краткой прозы. Мы рассмотрели представления автора драмы «Маленький человек», сопоставив их с запросами известного западноармянского прозаиста Ерухана. Сборник «Смиренные» нами был изучен с точки зрения социальной психологии гендера. На основании современных психологических теорий мы изучили психологические особенности сексуальной жизни юных героев. Систему свидетельствующих злодеяний Ошакана мы завершили оставшимися без внимания наблюдениями серий «Старое и новое» и «Когда они молоды». Центральное место в работе было отведено одному из почти неизученных произведений Ошакана - серии «Цветы смерти", акцентируя внимание на интерпретацию теоретических вопросов.

Методология диссертации. Тематический масштаб диссертации дает возможность исследовать проблему с помощью герменевтических, психоаналитических, биографических, культурно-исторических, а также гендерно-психологических и историко-сравнительных методов.

Структура работы. Работа состоит из введения, трех глав, заключения и списка литературы.

В введении диссертации мы коснулись необходимости новой интерпретации краткой прозы Ошакана, представили историю проблемы, цель

и задачи диссертации, методологическую основу работы, обосновали актуальность темы и научную новизну.

В первой главе, которая состоит из двух подпунктов, нами рассмотрены изучены особенности народных произведений и их бытья. В качестве отражений армянской души проанализированы черты характера, религиозные представления и верования героев. Представлен внутренний мир героев, сопровождающийся властным влиянием нравов и обычаев, с драматизмом борьбы души и тела.

Во второй главе по трем подпунктам рассматриваются оказавшиеся в поле зрения писателя драма «Маленький человек», круг гендерных вопросов в серии рассказов «Смирение» и психологические нюансы взросления героев-подростков.

В третьей главе рассматриваются особенности свидетельствующих злодеяний Ошакана и теоретические принципы серии «Цветы смерти», написанной под непосредственным впечатлением от геницита.

В разделе **заключения** нами представлены такие выводы, к которым мы пришли в результате проведенного исследования.

Диссертация завершается списком использованной литературы.

HAKOB OSHAKAN'S LITTLE PROSE
(THE PROBLEM OF THE SPIRITUAL AND THE NATURAL)

Dissertation to obtain the degree of a candidate of Philology. Field of specialization: 10.01.02 - Armenian Literature of the New Period.

The defense of the dissertation will take place on June 28, 2023 at 12:00 p.m., at the HQC (Higher Qualification Committee) Specialized Counsil 012 of "Literature Studies" in Yerevan State University. Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

Summary

Relevance of the topic: The works of Hakop Oshakan have been and remain in the center of attention of literary critics from the first period of his work. In particular, more often has been written about his novelistic legacy. Among the works of short prose, in particular, the collection "Modest" was studied, and other books and series were discussed within the framework of general reviews. The theoretical issues discussed in short prose are hardly taken into account in proper literary criticism.

Today, few people read the works of Oshakan. The reader describes it as difficult to understand or obscure. True, the language of Oshakan's works, especially short prose, is not easy to understand, which exacerbates the problem of methods of study and presentation of content. Therefore, in order to arouse the interest of the modern reader, a modern study of the material is necessary, which will provide an opportunity to see from a new perspective such issues that are raised in Oshakan's short prose, which are of great interest to modern anthropological sciences. Among these issues are gender and psychophysiological problems. The study of ethnographic layers is due to the need to address the components of national identity in the current conditions of globalization. The mention of the stoning of the writer is substantiated by the circumstances of some works written on this topic, but left out of the field of view of researchers. And we believe that interest in the literary issues raised by Oshakan is still great.

Goals and objectives of the study. The purpose of the dissertation is a comprehensive interpretation of the author's short prose, and in particular the spiritual values and instinctive phenomena manifested in it, for the implementation of which we set the following tasks:

1. Present the ethnographic and folklore layers of Oshakan's stories as a living reflection of the spiritual culture and the Armenian soul of the native lost land.

2. To present Oshakan's interpretations of the psyche of the “little man”, reasoning about gender and psychosexual problems as manifestations of the anti-dramatic unity of the spiritual and instinctive considered by the author.
3. Show the features of echerns and clarify the author's position regarding the causes and consequences of echerns, present the attitude of the writer as mourning the loss of spiritual values and criticizing the instinctive inclinations of the criminal, explore the theoretical and artistic issues of works written under the direct impressions of echerns.

Scientific novelty of the work. This dissertation is the first comprehensive study on Oshakan's short prose, made specifically in the context of the study of spiritual and instinctive phenomena. Without overshadowing the work of its predecessors, for the first time the ethnographic and folklore layers of short prose are fully explored. We examined the ideas of the author of the drama "The Little Man", comparing them with the requests of the famous Western Armenian novelist Yerukhan. We studied the collection "Modest" from the point of view of the social psychology of sex. On the basis of modern psychological theories, the psychological characteristics of the sexual life of young heroes are studied. We supplemented the Oshakan rock system with observations of the forgotten series “Old and New” and “Khen Pztik”. The central place in the work is given to one of the little-studied works of Oshakan, the Mahuan Flowers series, with an emphasis on the interpretation of theoretical issues.

Dissertation methodology. The thematic inclusion of the dissertation provides an opportunity to explore the problem using hermeneutic, psychoanalytic, biographical, cultural-historical, gender-psychological and historical-comparative methods.

Paper structure. The work consists of an introduction, three chapters, a conclusion and a list of references.

In the introduction, we mentioned the need for a new interpretation of Oshakan's short prose, presented the history of the issue, the goals and objectives of the dissertation, the methodological basis of the work, proved the relevance of the topic, scientific novelty.

In the first chapter, consisting of two subsections, the features of folk works and the forms of kakatuta were considered. Character traits, religious ideas and beliefs of the heroes are analyzed as reflections of the Armenian soul. The inner world of the heroes is presented, accompanied by the imperious influence of mores and customs, with a dramatic drama of the battle of soul and body.

In the second chapter, in three subsections, the drama of the “little man” is considered from the point of view of the writer, the spectrum of gender issues in the story “Humble” and the psychological nuances of growing up of teenage characters.

The third chapter discusses the features of Oshakan sculpture and the theoretical principles of the Mahuan Flowers series, painted under direct impressions of the sculpture.

The "Conclusions" section presents the judgments that I came to as a result of the study.

The dissertation ends with a list of references.